«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի Ս. Քոչարյանցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ Հաստատություն/ հայտարարում է մրցույթ՝ դասվարի (18 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորում և հարցազրույց:

Թեստավորման փուլն անցակցվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի համար նախատեսված հարցաշարը կազմում է Հաստատությունը, հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Նշված փաստաթղթերը ներկայացնել բնօրինակների հետ /պատճենների հետ համեմատելուց հետո բնօրինակները վերադարձվում են/:

Փաստաթղթերն ընդունվում են **2022 թվականի հունիսի 9-ից մինչև 2022 թվականի հունիսի 22-ը**, բոլոր աշխատանքային օրերին՝ ժամը 10:00-ից 15:00-ն:

Մրցույթը տեղի կունենա **2022 թվականի հունիսի 24-ին՝ ժամը 10:00–ին**, Հաստատությունում, հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Դեմիրճյան 32:

Տեղեկությունների համար զանգահարել 099991203 հեռախոսահամարին: